РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРАГАЦОТН
ОБЩИНА ШАМИРАМ

ARAGATSOTN REGION
SHAMIRAM
MUNICHIPALITY

Հ Հ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Моб. / 093/434358
mraz.broyan@mail.ru

N 49 „31„ 08 „ 2011թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

*Կից ներկայացվում է Շամիրամ համայնքի ավագանու 30.08.2011 թ. ճn-8 արտահերթ նիստի արձանագրությունը որոշումը առ դիր 4 թերթից:*

ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Հ. ԲՐՈՅԱՆ

Ելք
Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
01. 09 2011 թ.
№ Z-783

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔ

30. օգոստոսի 2011թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր համայնքի հաշվապահ Ռուզաննա Հովսեփյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Մրազ Բրոյանը.
Նիստը արձանագրում էր քարտուղար Յուղաբեր Աբգարյանը.

*Լսեցին*

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30 – Ի ԹԻՎ - 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՅՈՒՂԱԲԵՐ ԱԲԳԱՐՅԱՆ/

1. Համայքնի 2011 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին;

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 1/

*Լսեցին*

ՀԱՄԱՅՔՆԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ/

Երկար սպասումներից հետո, վերջապես, մեզ հաջողվեց իրականացնել մեր վաղեմի երազանքը: Բազմաթիվ չարչարանքներից հետո մենք կարողացանք բյուջեի շատ սուղ միջոցների հաշվին վերանորոգել համայնքի խարխլված կենցաղի տան շենքը և այն տրամադրել տեղական իշխանության մարմիններին, որպես նստավայր և աշխատանքի վարչական շենք: Դրանով մենք թեթևացրեցինք մեր դպրոցի հոգսերը և մեր զբաղեցրած 57 մք. տարածքը, որը բաղկացած է երեք սենյակներից և մեկ միջանցքից, տրամադրել դպրոցին ծառայելու, որպես լաբորատոր և համակարգչային սենյակներ:
Նոր շենքը տեղափոխվելու գործընթացը պետք է արագացնենք, քանի որ սեպտեմբերի 1-ից մեզ բաժանում է ընդամենը մեկ օր: Այսօրվա մեր ունեցած տնտեսական գույքը /աթոռներ և նստարաններ/ երկար տարիների ընդացքում մաշվել և օգտագործման համար ոչ պիտանի, ուստի առաջարկում եմ բյուջեում կատարել համապատասխան փոփոխություն, որի արդյունքում

կկարողանանք փոխանցման միջոցով ձեռք բերել մոտ 250000 Հ Հ դրամ արժողությամբ աթոռներ և այլ գույք:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին կատարել համայնքի 2011 թվականի բյուջեում համապատասխան փոփոխություններ, որը վարչական շենքի կահավորման նպատակով, փոխանցման միջոցով 250000 Հ Հ դրամ գումարի արժողությամբ գրասենյակային գույք /աթոռ/ ձեռք բերելու համար:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ – 5 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 2-ն/

Համայնքի ավագանիներ

Թեմուրով Սիմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկե

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստը արձանագրեց Յուդաբեր Աբգարյանը ....................

2011թ. օգոստոսի 30-ը
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2011թ. N 1

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30 – Ի ԹԻՎ - 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 12-րդ հոդվածի համաձայն *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Համայնքի 2011 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրինց

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011թ. օգոստոսի 30
գ. Շամիրամ

µ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30 օգոստոսի 2011թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 2-Ն

### ՀԱՄԱՅՔՆԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետը և համայքնի ղեկավարի առաջարկությունը համայքնի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին կատարել համայքնի 2011 թվականի բյուջեում համապատասխան փոփոխություններ, նոր վարչական շենքի կահավորման նպատակով, փոխանցման միջոցով 250000 Հ Հ դրամ գումարի արժողությամբ գրասենյակային գույք /աթոռ/ ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ
Քյալաշյան Տոսուն
Աղեյան Ռուստամ
Շարոյան Ռուստամ
Հասանյան Պրիմկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011թ. օգոստոսի 30
գ. Շամիրամ